

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ  
ԺԱՄԸ 15:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Պ. Սաֆարյան	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ն. Գալստյան	ՀՀ վարչապետի օգնական
Ռ. Թովիջյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Հ. Գրիգորյան	«Այ Փի Էս Սի» ընկերության տնօրեն, սոցիոլոգ, ԵՊՀ-ի դասախոս
Ս. Կարախանյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի վարչության ղեկավար
Ն. Բալայան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի իրավաբան

1. Հիմնադրամի 2012 թվականի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում

---

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2012 թվականի տարեկան հաշվետվությունը:

2. Հիմնադրամի կանոնադրության փոփոխությունների քննարկում և հաստատում

---

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի հետ համատեղ խմբագրել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կանոնադրությունը.

2) հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կանոնադրության վերջնական փոխհամաձայնեցված և խմբագրված տարբերակը:

3. Հավատարմագրման հանձնաժողովի անդամների թեկնածուների քննարկում և հաստատում

---

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝ մեկշաբաթյա ժամկետում՝

1) գրավոր դիմել բոլոր բուհերին՝ հավատարմագրման հանձնաժողովի անդամների 3-5 թեկնածություն ներկայացնելու համար.

2) հավատարմագրման հանձնաժողովի անդամներ ընտրելու նպատակով բուհերից ստացված թեկնածությունների առաջարկները ներկայացնել «Մասնագիտական կրթության

որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջիկա նիստի քննարկմանը:

4. Հիմնադրամի 2013 թվականի բյուջեի, հաստիքացուցակի, կառուցվածքի և աշխատանքային պլանի քննարկում և հաստատում

-----  
(Ռ. Թովիցյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2013 թվականի բյուջեն, հաստիքացուցակը, կառուցվածքը և աշխատանքային պլանը.

2) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովիցյանին աշխատանքային ծրագրում ներառել համագործակցության արդյունքում ներգրավվելիք դրամաշնորհային միջոցների մասին տեղեկատվություն, որը տարեվերջին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից կընդունվի ի գիտություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ